

առ նա Սալահէտտին, ՚ի բաց թողուլ ոչ միայն գոր յօտարացն էր կորզեալ, այլ եւ գոր բնական ժառանգութեամբ ունէր. յանձնել ՚ի սուլտանն զերկիր իւր, եւ երթալ կալ ազատօրէն ուր եւ կամիցի: Ձի այսպէս եւ այլոց տերանց՝ սովոր էր սուլտանն ասել եւ առնել. իսկ թշնամեացն խոնարհելոց՝ անյիշաչար եղեալ՝ պարգեւս իսկ տայր եւ մեծարէր: Յետին գործ կամ հրաման իշխանութեան էր այս՝ մեծագորին, որ զամս քսան գրեաթէ անընդհատ յաղթութեամբ՝ յԵգիպտոսէ մինչեւ ՚ի սահմանս Նինուէի՝ նուաճեալ կալալ զերկիր, երեկ զգօրութիւն քրիստոնէից յարեւելս, եւ սարսեցոյց զարեւմուտս ահիւ անուան իւրոյ: Մեծագոյն եւ Լեւոնի տազնապ եւ դժնդակագոյն օրհաս էր կենաց իւրոց, այլ եւ օրահաս տէրութեան եւ բաղդի, եւ իւր եւ որոց ընդ իւրեւ վիճակելոց՝ համազգեացն եւ օտարաց: Ոչ այնքան թերեւս Սալահէտտին զԼեւոն ճանաչէր, որքան սա զՍալահէտտին, անդստին ՚ի ժամանակէն՝ յորում հանգունատիպ պատգամաւ կասեցոյց նա զեղբայր իւր Ռուբէն ՚ի ձեռներիցութենէ, եւ զիջաւ միայն յողոք եւ յարագ հնազանդել տրին. իսկ յոր յետ այնր յերկոտասան ամս՝ իբրեւ աջօք բացօք դիտէր եւ տեսանէր Լեւոն զամ ըստ ամէ աճել զօրանալ յօրանալ սուլտանին, եւ անյաղթելի ոմն նահատակ հանդիսանալ ՚ի մէջ երկրի: Չեն ապա զարմանք՝ եթէ սոսկացեալ զարհուրէր յանձին իւրում. ոչ զի ահեղք եւ սպառնալիցք էին պատգամքն, այլ զի այնպիսիք լինելոց էին՝ եթէ ոչ փութայր եւ ինքն նուաստանալ զիջանել հանգոյն եղբօր իւրոյ: Բայց ոչ Ռուբինի թուլատարր սիրտ էր ՚ի լանջս իւր, այլ հանգունակ հօրն եւ հօրեղբարց եւ համանուն հաւուն, (Ստեփանեայ, Թորոսի Բ եւ Լեւոնի).– եթէ իշխէին արդեօք եւ սոքա՝ ընդդէմ այնպիսումն աշխարհաքարոզ հզօրի կքրել, եւ շամբշութեամբ ՚ի պայքար մտանել.– նա մանաւանդ մինչ անկասկած թուէր, եթէ որ հաւանի ՚ի կամս նորա՝ ոչ վնասի յանձին: Այլ ո՞ւր այնուհետեւ մնային Լեւոնի այնքան ամաց երկունքն եւ բարձրաձիգ խորհուրդք. ո՞ւր թագն ըղձացեալ եւ արքայութիւնն տարածեալ (յուսովն՝ թերեւս անդրագոյն քան զսահմանս յոր եհասն յետոյ). յի՞նչ յանգէին այնքան վաստակք, յաղթութիւնք եւ խորագէտ հնարք, եւ կայսերական խոստմունք ոսկի կնքօք գրաւականեալք: Ջայտոսիկ ներհական խորհուրդս յեղեղելով ՚ի միտս իւր, ոչ գտանէր ելս երկուց անհնարին իրաց. այլ ոչ ներէր ժամանակն՝ վարանել. պատգամաւորն սաստէր ստիպէր, ժամագրութեանն պայման սպառէր. ճեպէր կէտն բաղդասահման՝ կամաւ թէ ակամայ: Անդ յայնժամ իբրեւ ՚ի յեղակարծ իմն թմբրութենէ թօթափեալ